պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Գործատուն և Շահառուն, հաշվի առնելով Գործատուի կողմից Տարածքային կենտրոնին ներկայացված հայտում նշված թափուր աշխատատեղի բնութագիրը և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, կարևորելով աշխատանքային հարաբերությունների կայունությունը և աշխատանքային հարաբերություններում կողմերի իրավահավասարությունը, հայտնում են իրենց պատրաստակամությունը և համաձայնությունն առ այն, որ՝

1) Շահառուն Գործատուի մոտ ընդունվելու է աշխատանքի ____ մեկ տարի ժամկետով, ______________________,

[illegible] [illegible]

որպես ԿՈՇԿԱԿԱՐ ,

[illegible]

2) Գործատուի մոտ Շահառուն աշխատանքը սկսելու է ______ «2» Նոյեմբեր 2021 ______ թվականից,

[illegible]

3) Շահառուի համար սահմանվելու է՝ ______________________ նորմալ աշխատաժամանակ, որը կազմելու է՝

[illegible]

______________________ շաբաթական 40 ժամ

[illegible]

4) Շահառուի աշխատավարձի չափն աշխատանքի ընդունելիս սահմանվելու է ամսական աշխատավարձի չափը 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

[illegible]

5) աշխատանքի այլ պայմանները որոշվելու են Գործատուի և Շահառուի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան:

13. Գործատուն և Շահառուն Պայմանագրով սահմանված դեպքերում պարտավորվում են Տարածքային կենտրոնին վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից վճարված գումարը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

14. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր ձևով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

## VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

15. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ ձևով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործելի,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունք,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

## VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Պայմանագրի կատարմամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

19. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

20. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

22. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

23. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 21.2-րդ և 21.5-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

24. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 21.2-րդ և 21.5-րդ կետերում նշված պահանջներին և Պայմանագրի 12-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան, կամ Գործատուն կամ Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

25. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ, իսկ Տարածքային կենտրոնին՝ երկու օրինակ:

## IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

______________________ ԱՍՑ ԱՐԱՐԱՏԻ

[illegible]

տարածքային կենտրոն

Գտնվելու վայրը՝ ք.Արարատ, Շահումյան 34

Հեռ. 060652756
Էլ. փոստ Ararat.ztk@mail.ru
Հ/հ ____________________
ի դեմս ____________________ ՏՆՕՐԵՆ ՄՈՒՔԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

(Համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

____________________
(ստորագրություն)

Կ.Տ. «1» Նոյեմբեր 2021

**Գործատու**

____________________ ԱՐԹՈՒՐ ԵՆՈՔՅԱՆ Ա/Ձ
(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը՝ Մարզ. ԱՐԱՐԱՏԻ Քաղ. ԱՐԱՐԱՏ Համ. ԱՐԱՐԱՏ Փող. ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Տուն 1 Բնակարան 17
Հեռ. 055859198
Էլ. փոստ.
Հ/հ 220399803661000
ՀՎՀՀ 47816436
ի դեմս ____________________ Տնօրեն ԵՆՈՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ
(Համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

____________________
(ստորագրություն)

Կ.Տ. «1» Նոյեմբեր 2021

**Շահառու՝**

ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ Հանր. ՀԱՅԱՍՏԱՆ Մարզ ԱՐԱՐԱՏԻ Քաղ. ԱՐԱՐԱՏ Համ. ԱՐԱՐԱՏ Փող. ԹՈՒՄԱՆՅԱՆ Տուն 3 Բնակարան 11
Հեռ. 4-37-24
Էլ. փոստ

____________________
(Միջնորդության դեպքում նշվում է՝ Միջնորդողի անունը, ազգանունը)

____________________
(Շահառուի կամ Միջնորդողի ստորագրությունը)

«1» Նոյեմբեր 2021